26.253

С. 1930, 446

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԵՐՏԱԳՐԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎ

ԵՐՏԵԼԻ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ՅԵՐԵՎԱՆ — 1930

334.6
4-21

Ga1681
334.6
Կ-21
05 JAN 2010

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Արհեստագործական արտադրական կոոպերատիվ ..... արտելի.

Արհեստագործական - արտադրական ..... արտելը (ֆիրման)

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ.

1. Արտելը կարող է ընդունել .....
սահմաններում բնակվող անձնավորություններից անդամներ .....
(կոոպերացման շրջանը);

Արտելի վարչությունը գտնվում է .....

2. Արտելը կազմակերպում է իր անդամների աշխատանքը կոլլեկտիվ հիմունքներով ..... արտադրության ասպարիզում և նպատակ ունի տնտեսավարական ձեռնարկումների միատեղ տանելու միջոցով աջակցել իր անդամների տնտեսական դրության բարելավման և կուլտուրական զարգացման, ներգրավելով նրանց՝ մեր

17 MAY 2013

յերկրի սոցիալիստական ընդհանուր շինարարության մեջ։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Այն դեպքերում, յերբ արտելն իր արտադրությունը տնտեսական պայմանների շնորհիվ հնարավորություն չունի իր բոլոր անդամների աշխատանքներով տանել արտելային ընդհանուր արհեստանոցներում, նա կարող է կազմակերպել արտադրական աշխատանքը նաև իր անդամների տներում, բաց թողնելով նրանց նյութեր վերամշակելու համար։

3. 2-րդ հոդվածում նշված նպատակներն իրագործելու համար արտելը՝

ա) կազմակերպում է ինչպես իր սեփական նախաձեռնությամբ, այնպես էլ պետական, կոոպերատիվ, հասարակական և մասնավոր կազմակերպությունների ու անձանց պատվերներով պատրաստվածքների արտադրությունը և յերկրորդ հոդվածում հիշված աշխատանքները կատարում է արտելային ընդհանուր, կամ արտելի կողմից կապալով վերցրած արհեստանոցներում, արտելի տրամադրության տակ, կամ նրա ոգտագործման ներքո գտնվող հողամասերում, անտառամասերում և այլ վայրերում և պատվիրողների շենքերում ու հողամասերում։

բ) Իր սեփական միջոցներով կատարում է նյութերի և կիսաֆաբրիկատների անհրաժեշտ վերամշակություն, իսկ 50-րդ հոդվածում նախատեսված դեպքում, առանձին ձևի աշխատանքների կատարումը պատրաստվածքների վերամշակման ասպարիզում հանձնում է այլ կոոպերատիվ կազմակերպություններին և պետական ձեռնարկություններին, իսկ բացառիկ դեպքերում՝ մասնավոր անձանց և կազմակերպություններին։

գ) Հայթայթում և գնում է արտելի արտադրական գործունեության համար անհրաժեշտ նյութեր, կիսաֆաբրիկատներ, գործիքներ մեքենաներ և սարքավորման այլ առարկաներ։

դ) Կազմակերպում է պահեստներ պատրաստի արտադրությունը պահելու համար և բաց է անում խանութներ։

յե) Իր արտադրության մեծաքանակ վաճառքը, իբրև կանոն, կատարում է այն միության միջոցով, վորի անդամ է հանդիսանում արտելը, կամ վաճառում է անմիջականորեն կոոպերատիվ և պետական կազմակերպություններին, իսկ յերբ նման ձևի վաճառքը հնարավոր չե, արտելն իր պատրաստվածքները սպառում է շուկայում։

58340-67
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Библиотека

զ) Կազմում է դրամագլուխներ (տես 30—40 հոդվածներ)։

է) Ընդունում է ավանդներ իր անդամներից։

ը) Համապատասխան ժարմիններին ընդհանուր հսկողության տակ տանում է իր անդամներ մեջ կուլտուր-կրթական աշխատանքներ՝ ինչպես տեխնիկական, այնպես էլ հանրակրթական բնույթ կրող գիտելիքներ տարածելու նպատակով ընթերցանություն, զրույցներ, դրդաբաններ, ցուցահանդեսներ կազմակերպելու, պարբերական և վոչ պարբերական ժամուլի հրատարակման, արտադրական հրահանգչության և այլնի միջոցով։

թ) Ցույց է տալիս իր անդամների իրավաբանական ոգնություն։

ժ) Կատարում է այլ գործողություններ, վորոնք բղխում են 2-րդ հոդվածում հիշված արտելի նպատակներից։

Բացի վերոհիշյալն արտելը կարող է՝

ի) 51-րդ հոդվածում հիշված պայմանները պահպանելով՝ ձեռք բերել արտելի և վոչ կոոպերացված տնայնագործների ու արհեստավորների կողմից արտադրվող իրերի սպառման համար անհրաժեշտ աստորտիմենտ կազմող առարկաներ (սույն հոդվածի, «ը» յենթակետ) և վաճառել այդպիսիները արտելի և վոչ կոոպերացված

տնայնագործների պատրաստվածքների հետ միասին։

լ) 49 ըդ հոդվածում հիշված դեպքերում և պայմաններով մատակարարել նյութեր և արտադրության միջոցներ արտելի վոչ անդամ—տնայնագործներին և արհեստավորներին և ընդունել նրանցից սպառման կամ լրացուցիչ վերամշակության և սպառման համար պատրաստվածքներ։

խ) 52-ըդ հոդվածում հիշված դեպքում իր անդամներին մատակարարել կենսամթերքներ, և լայն գործածության համար այլ առարկաներ։

4. Արտելը կարող է անդամագրել և փայագրվել կոոպերատիվ Միություններին և այլ հիմնարկներին ու կազմակերպություններին, վորոնց նպատակները համապատասխանում են արտելի նպատակներին։

5. Արտելն իրավունք ունի անդամագրվել արհեստագործական կոոպերացիայի փոխոգնության դրամարկղին։ Յեթե արտելը չի անդամագրվում դանձարկղին, ապա նա պարտավոր է ստեղծել հատուկ դրամագլուխ՝ ընդհանուր ժողովի վորոշմամբ սահմանված չափերով և պայմաններով իր անդամներին նյութական նպաստներ տալու համար։

6. Սույն կանոնադրության 2-ըդ հոդվա-

ծում հիշված նպատակների հիման վրա, արտելը կարող է որինական բոլոր միջոցներով ձեռք բերել և ոտարել գույքի իրավունքներ, կնքել ամեն տեսակի պայմանագրեր, նրանց թվում՝ շենքերի գրավման, կառուցումների, ձեռնարկությունների և հողամասերի կապալի և այլ գույքի համար վերցնել իր վրա կապալների և այլ հանձնարարությունների կատարումը ինչպես ճուրդներից, այնպես էլ առանց այդպիսիների, տալ մուրհակներ և ամեն տեսակի պարտավորագրեր ընդունել նվիրատվություններ, հայց հարուցել և պատասխանել դատարանում և ոգտվել իրավական անձի բոլոր իրավունքներով։

7. Արտելն ունի իր անվանական կնիքը։

8. Իր վրա վերցրած պարտավորությունների համար արտելը պատասխանատու է իր ամբողջ գույքով։ Բացի այդ՝ արտելի անդամները կրում են լրացուցիչ պատասխանատվություն, համաձայն սույն կանոնադրության 26-րդ հոդվածի այն դեպքում, երբ արտելի ունեցվածքը չբավարարի նրա պարտատերերին բավարարելու համար։

2. ԱՐՏԵԼԻ ԿԱԶՄԸ, ՆՐԱ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

9. Արտելի անդամներ կարող են լինել 16 տարեկան և բարձր հասակ ունեցող կոոպերացման շրջանում բնակվող անձինք (հոդ. 1-ին)։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—18 տարին չլրացրած անձինք չեն կարող լինել արտելի հիմնադիրներ և ընտրվել վարչական (նրանց թվում արտելի լիազորական ժողովում) և ստուգող մարմիններում, ինչպես նաև չեն կարող լինել արտելի լիազոր-ներկայացուցիչներ լիազորական ժողովներում կամ այլ՝ կազմակերպություններում, որոնց անդամ է հանդիսանում արտելը։

10. Արտելի անդամները չեն կարող լինել այն անձինք, որոնք ներկայանում են նույն կամ նույնանման արտադրությամբ զբաղվող այլ արհեստագործական արտելի անդամ։ Եթե արտելի անդամները, բացի արտելի ընդհանուր արհեստանոցում կատարած աշխատանքից պարապում են արհեստով իրենց տանը ևս, այդ դեպքում նրանք չեն կարող ոգտվել այդ արհեստում վարձու աշխատանքով։

Արտելի անդամների թիվը չի կարող լինել 5-ից պակաս։

11. Արտելի անդամների ընդունելությունը կատարվում է ընդհանուր ժողովի, կամ նրա լիազորությամբ՝ արտելի վարչության կողմից։

Վարչության կողմից արտելի անդամի արտելում ընդունելության մերժումը կարող է բողոքարկվել ընդհանուր ժողովին, որի որոշումը վերջնական է։

12. Արտելում ընդունվել ցանկացողը սակիս է արտելի վարչությանն այդ մասին գրավոր հայտարարություն, որում պետք է լինի նոր ընդունվող անձնավորության պարտավորությունը արտելի կանոնադրության որոշումների, վարչական մարմինների պահանջների և կարգադրությունների կատարելու և կանոնադրությամբ սահմանված գործերի համար պատասխանատվությունն իր վրա վերցնելու մասին, Արտելում ընդունվող պատասխանատու է և այն պարտավորությունների համար, որոնք ծագել են մինչև նրա արտելում ընդունվելը։ Արտելում ընդունվողը ձ՝ոք է բերում անդամի իրավունք և կրում է պարտավորություն ընդունելության մասին ընդհանուր ժողովի կամ վարչության որոշումը կայացնելու որից։

13. Արտելում ընդունվողը պարտավոր է վճարել մուտքի վճար և փայավճար ինչպես նաև ընդհանուր ժողովի կողմից որոշված հատուկ վճարներ, եթե ընդհանուր ժողովի որոշմամբ այդ-պիսիները պարտադիր են նաև նոր ընդունվող անդամների համար։

Փայավճարների և այլ վճարների մուծման կարգը սահմանվում է ընդհանուր ժողովը, որը սահմանում է նաև նոր ընդունվող անդամներին տրվող փայավճարների մուծման ժամկետների կարգը։

14. Արտելի յուրաքանչյուր անդամ ունի հավասար իրավունք արտելի մյուս անդամների հետ միասին, ընդհանուր ժողովում տրված բոլոր հարցերի լուծմանը մասնակցելու և ստանալ արտելի վարչական մարմինների որոշումներով և սույն կանոնադրությամբ սահմանվածի հիման վրա արտելի անդամներին ցույց տրվող աջակցությունն իր տնտեսական աշխատանքներում։ Արտելի որևե անդամի արտելում մեկ փայից ավելի ունենալու հանգամանքը նրան չի տալիս վոչ մի առավելություն վարչության մեջ մասնակցելու և արտելից ոգտվելու մեջ։ Նույնպես արտելի անդամին փայը մուծելու ժամկետեր տալը վոչնչով չի կրճատում նրա իրավունքները այն անդամների համեմատությամբ, որոնք փայը մուծել են լրիվ։

15. Արտելի անդամի կողմից փայի փոխանցումը մեկ ուրիշին չի թույլատրվում։ Նույնպես չի թույլատրվում արտելում մասնակցելու իրավունքի փոխանցումը կամ այդ իրավունքի փոխանցումը նրա ժառանգներին։

16. Արտելի յուրաքանչյուր անդամի համար պարտադիր է արտելի գործունեությանը անձնական աշխատանքով մասնակցելը։ Առանց հարգելի պատճառների այս պարտականությունների չկատարելը կարող է հիմք ծառայել նրան արտելից հեռացնելուն։

17. Արտելի աշխատանքներում անդամի անձնական աշխատանքով չմասնակցելու պատճառների հարգում կամ չհարգումը վորոշում է ընդհանուր ժողովը։

Ընդհանուր ժողովի վորոշմամբ մասնավորապես, արտելում կարող են մնալ այն անդամները, վորոնք իրենց անաշխատունակությունը կորցրել են արտելում աշխատելու ժամանակ։

ԾԱՆՈՒԹՈՒԹՅՈՒՆ,—Յեթե արտելի անդամները ժամանակավորապես դադարում են արտելում աշխատելուց զինակոչի յենթարկվելու կամ զանազան խորհրդային, կուսակցական կամ հասարակական (նրանց թվում նաև կոոպերատիվ) հիմնարկներում ու կազմակերպություններում ընտրովի աշխատանքներ տանելու հետևանքով, իրավունք ունեն մնալ արտելի անդամներ վերոհիշյալ պաշտոնական պարտականությունները կատարելու ամբողջ ժամանակամիջոցում։

18. Արտելի յուրաքանչյուր անդամ իրավունք ունի հեռանալ արտելից, տալով այդ մասին վարչությանը գրավոր հայտարարություն։ Հեռացման որը համարվում է հեռացման մասին հայտարարություն տրված որը։

19. Արտելի մեռած անդամի արտելից հեռացման որը համարվում է նրա մահվան որը։ Մեռածի ունեցվածքային իրավունքներն անցնում են նրա ժառանգներին որենքով և սույն կանոնադրությամբ վորոշված կարգով և սահմաններում։

20. Յեթե արտելի վորևե անդամի մոտ յերևան հանվեն այն պատճառներից մեկը, վորի համաձայն նա ըստ որենքի չի կարող մնալ արտելում, այսպիսին համարվում է արտելից հեռացված և վարչության վորոշմամբ նա հանվում է արտելի անդամների ցուցակից։ Այդպիսի անձնավորության արտելից հեռացման որը համարվում է այն որը, յերբ վարչությունը վորոշում է կայացրել հանել նրան արտելի անդամների ցուցակից։ Վարչության վորոշումը կարող է բողոքարկվել ընդհանուր ժողովին։

21. Յեթե արտելի անդամն առանց հարգելի պատճառների չի կատարում արտելի հանդեպ իր պարտականությունները, խախտում է կանո-

նաղրությունը կամ չի յենթարկվում արտելի վարչական մարմինների որինական պահանջներին և ընդհանրապես գործում է իշխաս արտելին, կարող է հեռացվել արտելից ընդհանուր ժողովի վորոշմամբ։

22. Հեռացվող անդամի արտելից հեռացման որը համարվում է նրա հեռացման մասին ընդհանուր ժողովի վորոշման որը (հոդ. 21)։

23. Արտելից հեռացված անդամը կարող է վերընդունվել արտելում միայն ընդհանուր ժողովի վորոշմամբ։

24. Դուրս մնացած (հեռացած կամ հեռացված) անդամը զրկվում է ընդհանուր ժողովում մասնակցելու իրավունքից հեռացման մասին վորոշում կայացրած որից կամ 20-րդ հոդվածում նախատեսված դեպքում վարչության վորոշման որից։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Յեթե արտելի հեռացած կամ հեռացված անդամը արտելի վարչական մարմիններում վարել է վորևե ընտրովի պաշտոն, ապա նրա այդ պաշտոնի համար լիազորությունները դադարում են սույն հոդվածում հիշված ժամանակից։

25. Արտելի կնոջից յերրորդ անձնավորությունների հանդեպ իր վրա վերցրած պարտականությունները հաջող կերպով կատարելու նպատակով կամ արդեն սկսված աշխատանքներն ավարտելու համար վարչությանն իրավունք է վերապահվում պահանջել արտելի այդ աշխատանքներում մասնակցող հեռացվող անդամից կատարել այդ աշխատանքներից իրեն հասնող մասը վարչության կողմից սահմանված ժամանակամիջոցում, որը չի կարող լինել 2 շաբաթից ավելի։ Յեթե հեռացվող անդամը չի կատարում վարչության նման առաջարկությունը նա պատասխանատու է դրա հետևանքով արտելի կրած վնասի համար։

26. Արտելի յուրաքանչյուր անդամ կրում է արտելի պարտավորությունների համար լրացուցիչ պատասխանատվություն դատարանի կողմից արտելը սնանկ ճանաչվելու դեպքում։ Պատասխանատվության չափը սահմանվում է պարտադիր փայավճարի.....չափով։

27. Արտելից հեռացած անդամը կամ նրա մահվան դեպքում ժառանգները ժառանգությունն ընդունելիս, այլ արտելից հեռացված անդամը մյուս անդամների հետ հավասար չափով, 66-րդ հոդվածով նախատեսված կարգով մասնակից են դարվում անդամի արտելից դուրս գալու գործառնական տարվա ընթացքում արտելի կողմից

կրած վնասների հատուցման։ Սակայն յեթե արտելից հեռանալիս անդամը չի ծածկելիր պարտքը այդ դեպքում վերջին տարին յերբ նա կամ նրա ժառանգները մասնակից են դարձվում արտելի վնասների հատուցման, վերջին հաշվվում է այն տարին, յերբ նա կամ նրա ժառանգները լրիվ կվճարեն պարտքը։

28. Արտելից հեռացած անդամը կամ մեռած անդամի ժառանգները ժառանգությունն ընդունելիս, արտելի անդամների հետ միասին հավասար հիմունքներով, մի տարվա ընթացքում, հաշվելով արտելից հեռանալու որից կրում է լրացուցիչ պատասխանատվություն արտելի պարտավորությունների համար, յեթե վերջինս դատարանով մնանկ ճանաչվի։ Սակայն յեթե արտելի անդամն արտելից հեռանալիս չի վճարել իր պարտքը, այդ դեպքում տարին հաշվվում է այն որից, յերբ նա կվճարի իր պարտ։

29. Արտելից հեռացված կամ հեռացած անդամին կամ նրա ժառանգներին, նրա փայավճարը վերադարձվում է ընդհանուր ժողովի կողմից արտելի տարեկան (այն տարվա, որի ընթացքում անդամը հեռացվել է) հաշվետվությունը հաստատելու որից վոչ ուշ, քան յերեք ամիս հետո, ըստ վորում փայավճարից պահվում է

է արտելից կրած վնասներից նրա վրա ընկնող մասը։ Յեթե արտելի անդամը կամ նրա ժառանգները լրիվ կերպով չեն կատարել արտելին տված իրեն պարտավորությունները, այդ դեպքում նշած յերեք ամիսը հաշվվում է այդ պարտավորությունների կատարելու որից։ Բացի նշած գումարից արտելից հեռացած կամ հեռացված անդամը իրավունք չունի ստանալու արտելի պատկանող գույքից վորևե մաս, բացի հատուկ դրամագլուխներ կազմելու համար նրա կողմից կատարված մուծումները, վորոնք յենթակա յեն վերադարձման սույն կանոնադրության մեջ այդ մասին յեղած կետի հիման վրա։

3· ԱՐՏԵԼԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

30. Արտելը պիտի ունենա հիմնական և պահեստի դրամագլուխներ և բացի այդ կարող է կազմել հատուկ դրամագլուխներ։

31. Հիմնական դրամագլուխը կազմվում է՝

ա) Մուտքի և փայավճարներից·

բ) Արտելի ոգուտներից կատարվող հատկացումներից, վորոնք պիտի լինեն վոչ պակաս

գ) Այդ նպատակով փոխարինաբար վերցրած գումարներից և

դ) այլ յեկամուտներից։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. — Հիմնական դրամագլխի համար վերցրված փոխառությունների համար արտելը պարտատիրոջ հետ կնքում է պայմանագիր այն մասին, որ արտելի լուծարքի դեպքում հիմնական դրամագլխի համար վերցրած գումարները վերադարձվում են միայն արտելի մնացած բոլոր պարտքերը վճարելուց հետո։

32. Մուտքի վճարն ամեն մեկ անդամի համար սահմանվում է.....ռուբլի։

33. Պարտադիր փայը հավասար է.....ռուբլու։

34. Փայն անդամի կողմից մուծվում է լրիվ արտել մտնելիս կամ մաս-մաս, ըստ որում մաս-մաս մուծելու ժամկետները և չափը որոշվում են ընդհանուր ժողովի կողմից։

35. Արտելի անդամների փայավճարներից չի կարելի դարձնել արտելի առանձին անդամների պարտքերը յուր նրանցից անվիճելի ու վարչական կարգով գանձման յենթակա գումարները։

36. Պահեստի դրամագլուխը կազմվում է արտելի ոգուտներից կատարված հատկացումներից յուր այլ միջոցներից, որոնք կարող են

գտնվել արտելի տրամադրության տակ յուր ծառայել արտելի մնացները ծածկելու համար։

37. Պահեստի դրամագլուխը արտելի մնացած (չհաշված փայադրամագլուխը) դրամագլուխների—20% ին հավասարվելիս, այդ ֆոնդին հատկացումները յուրաքանչյուր տարի պետք է արվի արտելի ոգուտի 10%-ի չափով։ Պահեստի դրամագլխին հետագայում արվելիք հատկացումները կախված են ընդհանուր ժողովի հայեցողությունից։ Պահեստի դրամագլխին հետագայում արվելիք հատկացումները կախված են ընդհանուր ժողովի հայեցողությունից։ Պահեստի դրամագլխի պահելու յուր նրանից ոգտվելու կարգը սահմանվում է հատուկ որենքով նախատեսված կանոնների։

38. Հատուկ դրամագլուխները կարող են կազմվել՝

ա) Ընդհանուր ժողովի կողմից սահմանված, ինչպես հեռացվող անդամներին վերադարձվելիք այնպես էլ չվերադարձվող պարտադիր յուր կամավոր մուծումներից։

ա) Հատուկ դրամագլխի համար ստացվող փոխառությունների գումարից։

գ) Ընդհանուր ժողովի կողմից սահմանված չափով արտելի ոգուտներից այդ նպատակի համար կատարվող հատկացումներից։

58340-67
Գոս. Գրադարան
Гос. Библиотека
ՀԱՅԿ ՍՍՀ-Арм ССР
БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук

դ) Արտելի ոպերացիաներից գոյացած հատկացումներից և վերադիրներից։

յե) Այլ մուծումներից։

39. Հատուկ դրամագլուխներ կարող են կազմվել այլ նպատակների հետ զուգընթաց նաև արտելի արտադրության մեջ տեղի ունեցող դժբախտ դեպքերից տուժած անդամներն, ինչպես նաև արտելի կարիքավոր անդամներին յեվ նրանց ընտանիքներին նպաստներ տալու համար այն դեպքերում և կարգով, որը կսահմանի ընդհանուր ժողովը։

5-րդ հոդվածում հիշված դեպքերում արտելի անդամներին նպաստ տալու համար հատուկ դրամագլխի կազմելը պարտադիր է։

40. Հատուկ դրամագլխի կազմելու յեվ ծախսելու կարգը սահմանվում է ընդհանուր ժողովի կողմից։

Հատուկ դրամագլխին արտելի անդամների կողմից արվելիք մուծումների առավելագույն չափը չի կարող լինել ավելի -ից։

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆ ԱՐՏԵԼՈՒՄ

41. Արտելի ձեռնարկություններում (արհեստանոցներում) ամբողջ աշխատանքը կատարվում է արտելի անդամների անձնական աշխատանքով։ Առանձին դեպքերում, արտելի անդամի կողմից իր տանը կատարվող աշխատանքը (2-րդ հոդվածի ծանոթություն) կարող է կատարվել նրա ընտանիքի անդամների ոժանդակությամբ։ Ձանազան ոժանդակ աշխատանքներ կատարելու համար, վորոնք չեն կազմում արտելի արտադրական գործունեության հիմնական առարկան և պահանջում են հատուկ մասնագիտական գիտելիքներ) ինչպես որինակ հաշվետարություն, մեքենաների հոգ տանելու յեվ այլնի ասպարեզներում) թույլատրվում է արտելում կողմնակի անձանց վարձու աշխատանքի կիրառումը, սակայն վարձու աշխատավորների թիվը չի կարող անցնել արտելի անդամների ընդհանուր թվի 20%-ից։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ, 1. Բացառիկ դեպքերում վարձու աշխատանքը կարող է ժամանակավորապես կիրառվել արտելում նաև արտելի հիմնական արտադրության մեջ, յուրաքանչյուր դեպքում տոմարագրող մարմնի՝ նահանգական կամ մարզային ժողովրդական տնտեսության Խորհրդի կամ տեղական տընտեսության բաժնի առանձին թույլտվությամբ վերջինիս կողմից սահմանված չափով և ժամանակով։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ։ 2. Մասնագիտական գիտելիքներ պահանջող զանազան ժամանակ աշխատանքներ տանելու համար հրավիրված անձնավորությունները կարող են ընդունվել արտելի անդամներ։ Այդպիսի անդամների թիվը չպիտի անցնի արտելի անդամների ընդհանուր թվի 20 տոկոսից։

42. Արտելում վարձու աշխատանքով պարապող անձանց նկատմամբ աշխատանքի որենսդրության կանոնները կիրառվում են լրիվ առանց վորևե բացառության։ Արտելի ձեռնարկություններում և ընդհանուր արհեստանոցներում աշխատող արտելի անդամների վրա աշխատանքի որենսգրության կանոնները տարածվում են միայն արտադրական սանիտարիայի, առողջապահության և տեխնիքական անվտանգության, ինչպես նաև կանանց և անչափահասների աշխատանքի պաշտպանության կանոնների նկատմամբ։

Արտելի անդամների և թեկնածուների համար բանվորական որվա տևողությունը սահմանվում է ընդհանուր ժողովի, կամ նրա լիազորությամբ՝ վարչության համապատասխան վորոշումներով։

43. Արտելը կարող է ունենալ դեռահաս աշակերտներ, ինչպես արտելի ընդհանուր արհեստանոցներում, այնպես էլ տանն աշխատող արտելի անդամների մոտ (2-րդ հոդվածի ծանոթություն)։ Ընդունվող աշակերտների թիվը ինչպես նաև նրանց աշխատանքի պայմանները սահմանվում են արհեստագործական կոոպերացիայում աշխատող աշակերտների համար գոյություն ունեցող աշակերտության կանոններով։ Աշակերտներն իրենց ուսուցման ամբողջ ժամանակաշրջանում չեն համարվում արտելի վարձու բանվորների նորմայի մեջ։

44. Արտելի անդամ ընդունվել ցանկացող անձանց համար արտելը կարող է սահմանել փորձառություն, ընդունելով նրանց իբրև թեկնածուներ։

45, Արտելում ընդունվող թեկնածուների թիվը չի կարող լինել ավելի, քան անդամների ընդհանուր թվի 20 տոկոսը։ Յուրաքանչյուր թեկնածուի փորձառության ժամկետը մեկ ամսից ավել չպիտի լինի։ Արտելն իրավունք ունի յեվ մինչև այդ ժամկետի ավարտելը համարել փորձառությունը ավարտված և վորոշել արտելում անդամ ընդունելու կամ չընդունելու հարցը։

46. Արտելում վարձու աշխատանք կատարելու դեպքում արտելում աշխատող վարձու աշխատավորների և թեկնածուների թիվը չի կա-

ղող լինել ավելի, քան արտելի անդամների ընդ-
հանուր թվի 30 տոկոսը։

47. Թեկնածուները փորձառության ժամա-
նակամիջոցում չեն համարվում վարձու աշխա-
տավորներ։ Արտելի վարչական մարմինների
կողմից աշխատանքները տանելու ներքին կա-
նոնները վորոշող բոլոր կանոնները յեվ հրա-
հանգները թեկնածուների համար պարտադիր
են։ Նրանց հետ հաշվեարկումը կատարվում է
նույն հիմունքներով, ինչ վոր արտելի անդամ-
ների հետ (58 և 61 հոդվածներ) Արտելը պար-
տավոր է յուրաքանչյուր թեկնածուին տալ նրա
աշխատանքի ընդունվելու ժամանակի մասին
վկայական։ Յեթե թեկնածուն իր փորձառու-
թյան ժամանակն լրանալուց յերկու շաբաթվա
ընթացքում չի ընդունվի արտելի անդամ, ար-
տելը պարտավոր է կատարել նրա հետ հաշվե-
արկում համապատասխան կվալիֆիկացիայի
վարձու բանվորների համար սահմանված միջին
նորմաներով, աշխատանքի որենսդրության կա-
նոնների համաձայն և մուծել հասանելիք ապա-
հովագրական տոկոսները։

5. ԱՐՏԵԼԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

48. Արտելի գործունեությունը, նրանց թվում
նաև արտադրական գործունեությունը կարող է

իրագործվել ինչպես արտելի անդամների մշտա-
կան բնակավայրում (կոոպերացման շրջանը),
այնպես էլ այդ շրջանից դուրս։ Մասնավորա-
պես արտելը ամեն տեղում կարող է կատարել
արտելի, ինչպես նաև վոչ կոոպերացված տնայ-
նագործներին մատակարարելու համար անհրա-
ժեշտ հում նյութի, նյութեղենի և կահույքի
գնումներ և բանալ պահեստներ ու խանութներ
արտելի կամ վոչ կոոպերացված տնայնագործ-
ների պատրաստի արտադրության սպառման
համար (հոդ. 49)։

49. Արտելի գործունեության շրջանում
(հոդ. 1) ապրող վոչ արտելի անդամ տնայնա-
գործների և արհեստավորների հում նյութով,
նյութեղենով և կահույքով մատակարարումը,
ինչպես նաև նրանց պատրաստի արտադրության
սպառումը արտելի կողմից կարող է կատարվել
միայն այն արհեստագործական կոոպերատիվ
միության թույլատվությամբ, վորի անդամ է
հանդիսանում տվյալ արտելը և այն ելայնդեպ-
քերում, յերբ այդ գործառնությունները կատար-
վում են արտելի կողմից մասնավոր գնորդների
դեմ կռվելու կամ ազգաբնակության հետագա
կոոպերացման նպատակներով։

Արտելի շրջանառությունը վոչ կոոպերաց-
ված տնայնագործների նյութեղենով մատակա-

բարման յեվ նրանց պատրաստի արտադրության սպառման գործարքների գումարը չպետք է անցնի արտելի ամբողջ շրջանառության գումարի 20 տոկոսից։

Այդ գործառնությունների համար արտելը տանում է հատուկ հաշվառում և հաշվետու է նրանց համար վոչ ուշ, քան վեց ամիսը մեկ անգամ այն միության առաջ, վորի թույլատվությամբ կատարվում է այդ աշխատանքը և տարին մեկ անգամ՝ ընդհանուր ժողովի առաջ։

50. Այն դեպքերում, յերբ արտելի արտադրական գործունեության համար պահանջելիք հում նյութի և կիսաֆաբրիկատների վերամշակման աշխատանքների առաջին մասերը կամ պատրաստվածքների վերջնական վերամշակումը չեն կարող կատարել արտելի ուժարով յեվ նրա տեխնիկական միջոցներով, նման բնույթի աշխատանքները կարող են արտելի կողմից կատարվել այլ կոոպերատիվ կազմակերպությունների կամ պետական ձեռնարկությունների, իսկ բացառիկ դեպքերում՝ մասնավոր ձանց ու կազմակերպությունների միջոցով։

51. Այն դեպքերում, յերբ արտելի պատրաստի արտադրության հաջող սպառման համար պահանջվում է վերջինիս արտադրության համար առևտրական ասորտիմենտ կազմող առարկաների

վաճառքը, արտելը, յեթե նա անդամ է արհեստավորական կոոպերատիվ միության, իրավասու է այդ միության թույլատվությամբ և վերջնիս կողմից վորոշված սահմաններում, կատարել նշված ասորտիմենտային առարկաների գնումներ և վաճառել այդպիսիները իր արտադրության հետ հետ միատեղ պայմանով, վոր ասորտիմենտային առարկաների վաճառքի շրջանառությունը կազմի արտելի սեփական արտադրության վաճառքի շրջանառության չնչին մասը։ Յեթե արտելը չի հանդիսանում Միության անդամ, ապա համապատասխան թույլտվություն կարող է տրվել ժողովրդական տնտեսության տեղական մարմնի կողմից։

52. Առանձին դեպքերում, միության գիտությամբ և թույլատվությամբ, միության անդամ հանդիսացող արտելը կարող է իր անդամներին ժամակարարել կենսաթերքներ և առաջին անհրաժեշտության արարկաներ այն դեպքերում, յեթե այն տեղական պայմաններով և ժամանակով, աշխատանքը կատարելու համար կճանաչվի անհրաժեշտ։ Յեթե արտելը չի հանդիսանում միության անդամ՝ համապատասխան թույլտվություն կարող է տալ ժողովրդական տնտեսության տեղական մարմինը։

53. Արտելը կարող է իր ներկայացուցիչ-

ների միջոցով իր անդամների, գործերով առանց նրանց կողմից փոխանորդագրի հանդես գալ դատական յեվ վարչական մարմիններում։

54. Կազմակերպչական խնդիրների յեվ արտելի գործունեության ընդհանուր ղեկավարության նկատմամբ արտելի համար պարտադիր են այն միության վորոշումները յեվ ցուցմունքները, վորի անդամն է հանդիսանում նա։

Արտելն իրավունք ունի միության վարչության վորոշումը բողոքարկել միության խորհրդին կամ ավելի բարձր կանգնած արհեստագործական կոոպերատիվ միության վարչության։

55. Արտելի և միության միջև մատակարարման և սպառման գործարքային հարաբերությունները սահմանվում են այն միության վարչության վորոշումներով, վորի անդամ է հանդիսանում արտելը։ Նման բնույթի վորոշումները նրանց կայացրած ժամենտից պարտադիր են արտելի համար։ Միության վարչության վորոշումն արտելը կարող է բողոքարկել միության խորհրդին կամ ավելի բարձր կանգնած արհեստագործական կոոպերատիվ միության վարչությանը։

6. ԱՐՏԵԼԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՐՏԵԼԻ ՀԵՏ

56. Արտելի անդամների կողմից աշխատանքներ կատարելու առթիվ արտելի և նրա անդամի միջև ծագող հարաբերությունները կարգավորվում են ընդհանուր ժողովի կողմից հրատարակվող վորոշումներով, կանոններով և հրահանգներով և արտելի վարչության կարգադրություններով, վորոնք պետք է հիմնված լինեն վերոգրյալի վրա։

57. Արտելի անդամների կողմից ընդհանուր արհեստանոցներում և առանձին հողամասերում, ինչպես նաև նրանց տներում տարվելիք աշխատանքների ներքին կարգապահությունը սահմանվում է ընդհանուր ժողովի կողմից։ Արտելի արտադրության կրճատման յեվ դրա հետևանքով նրա բոլոր անդամներին միաժամանակ աշխատանք տալը հնարավոր չլինելու դեպքում ընդհանուր ժողովը կամ նրա հանձնարարությամբ՝ վարչությունը սահմանում է արտելի անդամների մեջ աշխատանք ստանալու հերթականությունը։

58. Արտելի անդամների հետ աշխատանքի վարձատրության հաշվեառման կարգը սահմանվում է ընդհանուր ժողովի կամ նրա լիազորությամբ՝ վարչության կամ ընդհանուր ժողովի կողմից ընտրված հատուկ հանձնաժողովի կողմից։

59. Եթե արտելի անդամի կողմից նրան հանձնարարված աշխատանքը չի կատարվում կամ կատարվում է նշանակված ժամկետից ուշ, անպարտաճանաչ անդամը պատասխանատու է արտելի առաջ արտելին այդ աշխատանքից առաջացած վնասի համար։

60. Ընդհանուր ժողովը կարող է վարչությանը տալ՝ իրենց աշխատանքներում թերացող և կանոնադրության ու արտելի անդամների համար սահմանված հրահանգները խախտող անդամներին դրամական տուգանքների յենթարկելու իրավունքը այն չափերով և կարգով, որը կսահմանվի ընդհանուր ժողովի կողմից, ինչպես նաև արտելի աշխատանքներից այդպիսիներին ժամանակավորապես հեռացնելու իրավունքը, նախազգուշացնելով, որ նման դեպքեր կրկնվելու դեպքում կարող է հեռացվել արտելից։

61. Այն դեպքերում, յերբ արտելի աշխատանքները կատարվում է արտելի անդամների կողմից իրենց տներում (2-րդ հոդվածի ծանոթություն) արտելի անդամները պարտավոր են իրենց բաց թողած նյութեղենը և նրանցից պատրաստված արտադրությունը պահպանել ամբողջությամբ։ Եթե յերևան հանվի արտելի անդամների կողմից հիշյալ նյութեղենի կամ

պատրաստի արտադրության վաճառք, այդպիսիները յենթարկվում են պատասխանատվության, որպես գողծարարներ։

62. Եթե արտելը անդամագրվի արհեստագործական կոոպերացիայի փոխոգնության գանձարկղին, որն իր վրա կվերցնի պարտավորություն հատուցանել արտելի անդամի (նրա մահվան դեպքում) կամ նրա ընտանիքի անդամների կողմից կրած վնասները, որոնք հետևանք կլինեն արտադրության մեջ աշխատելու, այլև յեթե արտելը կկազմի հատուկ դրամագլուխ նպաստներ տալու համար (հոդ. 39), այդ դեպքերում ընդհանուր ժողովը կարող է կայացնել, որոշում այն մասին, որ նպաստներ տալը և նշած վնասների հատուցումը կատարվելու յե բացառապես փոխոգնության գանձարկղի կամ արտելի կողմից (հատուկ դրամագլխից) ընդհանուր ժողովի կողմից սահմանված կանոնների հիման վրա։ Նշած նպատակների և կենսաթոշակների չափը և տալու պայմանները սահմանվում է արտելի վարչական մարմինների որոշումներով կամ փոխոգնության գանձարկղի կանոններով կամ արտելի կանոնադրությամբ։

Կրած վնասների համար վերոհիշյալ կարգով ստացված հատուցումից բացի, արտելի անդամը կամ նրա ընտանիքի անդամները իրավունք

չունեն պահանջելու ուրիշ վորևե հատուցում արտելից։

7. ԱՐՏԵԼԻ ՈԳՈՒՏՆԵՐԻ ՅԵՎ ՎՆԱՍՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ

63. Արտելի բոլոր ծախսերը ծածկվում են արտելի գործարքային գործունեությունից գոյացած յեկամուտներից, համաձայն ընդհանուր ժողովի կողմից հաստատված նախահաշվի։

64. Արտելի ոգուտը հաշվարկվում է արտելի հաշվետու տարվա ընդհանուր յեկամտի մնացորդը, դուրս յեկած բոլոր ծախսերը և վնասները։

65. Արտելի ոգուտը բաշխվում է ընդհանուր ժողովի կողմից, վորը կարող է այդպիսին գործադրել հատուկ դրամագլուխներ կազմելու և արտելի այլ կարիքները բավարարելու համար, այլև գործադրել այդպիսին ընդհանուր կոոպերատիվ և հանրոգուտ նպատակների համար, ըստ վորում մինչև ոգուտի քաշխելն նրա ամբողջ գումարի վոչ պակաս, քան 10 տոկոսը հատկացվում է պահեստի և..... հիմնական դրամագլուխներին։ Ոգուտի մի մասը կարող է տրվել արտելի անդամներին, վորպես լրացուցիչ վարձատրություն՝ նրանց արտելի աշխատանքներում անձնական աշխատանքով մասնակցելու համեմատությամբ։ Յեթե արտելը միության անդամ

է հանդիսանում, ապա ոգուտի նման բաշխումը կարող է կատարվել միայն միության հետ համաձայնեցնելուց հետո։

66. Արտելի շրջանառությունից առաջացած վնասը ծածկվում է պահեստի դրամագլխից։ Յեթե ամբողջ վնասն այս միջոցով չի ծածկվի, ընդհանուր ժողովը կարող է բաժանել այն արտելի անդամների վրա՝ նրանց փայավճարների կամ նրանցից յուրաքանչյուրի կողմից հաշվետու տարվա ընթացքում արտելի աշխատանքներում մասնակցելու համար ստացած վարձատրության չափի համեմատությամբ։ Վնասները ծածկելու համար յուրաքանչյուր անդամից հասանելիք մուծումները չի կարող լինել ավելի, քան——

Յուրաքանչյուր անդամի կողմից նրանց հասանելիք վնասի մասը վճարելու համար ընդհանուր ժողովի կողմից նշանակվում է ժամկետ, վորը չի կարող անցնել տարվա վերջից։ Յեթե արտելի անդամի կողմից չի վճարվի հասանելի գումարը, վարչությունն իրավունք ունի գանձել այն դատական կարգով։ Այն, ինչ վոր չի գանձվի մեկ անդամից տարվա ընթացքում՝ բաշխվում է նույն հաշվով և գանձվում է մնացած անդամներից։

8. ԱՐՏԵԼԻ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ

67. Արտելի գործերի կառավարումը դրվում է վարչության յեվ ընդհանուր ժողովի վրա։

Ա. Ընդհանուր ժողով

68. Արտելի անդամների ընդհանուր ժողովը ներկայացնում է արտելի գործերի կառավարչության բարձրագույն մարմինը։

Ընդհանուր ժողովի իրավասությանն են պատկանում՝

ա) վարչության և վերաստուգիչ հանձնաժողովի անդամների ընտրությունը, վարչությունը և վերաստուգիչ հանձնաժողովը պաշտոնական անձնավորություններով (ավագ և վերաստուգող) փոխարինելու և այդ անձանց ընտրության հարցերի լուծումը.

բ) արտելի անդամների ընդունելությունը, յեթե այդպիսին չի հանձնարարված վարչությանը.

գ) արտելի անդամների հեռացումը.

դ) վարչության և վերաստուգիչ հանձնաժողովի անդամների համար հրահանգների քննությունը և հաստատումը, վարչության և վերաստուգիչ հանձնաժողովի անդամներին վարձատրություն նշանակելը և մինչև ժամկետի լրանալը վարչության անդամներին պաշտոնից հեռացնելը.

յե) վարչության կողմից ներկայացվելիք նախահաշիվների, հաշվետվությունների և գործունեության նախագծի քննությունը և հաստատումը, ոգուտների բաշխումը և վնասների ծածկումը (65 և 66 հոդվածներ).

զ) կանոնադրության փոփոխման և լրացման մասին յեղած հարցերի լուծումը.

է) փայի մուծման պայմանների սահմանումը.

ը) վարչության և վերաստուգիչ հանձնաժողովի դեմ տրված բողոքների քննությունը.

թ. արտելի աշխատանքների բոլոր ճյուղերում ներքին կարգապահության կանոնների, ինչպես նաև արտելի հատուկ դրամագլուխներ կազմելու և ոգտագործելու կանոնների քննությունը և հաստատումը.

ժ) արտելի կոոպերատիվ կամ այլ կազմակերպությունների անդամ ընդունման հարցերի լուծումը և այդ կազմակերպություններում արտելի ներկայացուցիչների ընտրությունը.

ի) արտելի հիմնական և պահեստի դրամագլուխների համար փոխառությունների հարցերի լուծումը և փոխառություններ կնքելու ընդ-

հանուր պայմանների սահմանումը, արտելի հատուկ դրամագլուխներ կազմելու համար անդամների կողմից արվելիք կամավոր և պարտադիր մուծումների սահմանումը։

լ) արտելի դադարեցման, լուծման և բաժանման հարցերի լուծումը։

խ) արտելի վարչության իրավասությունից վեր բոլոր հարցերի լուծումը և ընդհանրապես նրա իրավասությունից վեր բոլոր գործերի տանելը։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—«Թ» և «Ժ» կետերում նշված գործողությունները ընդհանուր ժողովի կողմից կարող են հանձնարարվել վարչությանը։

69. Ընդհանուր ժողով հրավիրվում է վարչության կողմից յուրաքանչյուր տարի, վոչ ուշ, քան գործառնական տարին վերջանալուց յերեք ամիս հետո՝ հաշվետվությունը քննելու համար։ Բացի այդ ընդհանուր ժողով հրավիրվում է ըստ կարիքի՝ վարչության վորոշմամբ, վերստուգիչ հանձնաժողովի կամ արտելի անդամների թվի $^1/_{10}$-րդ մասի պահանջի կամ այն միության պահանջով, վորի անդամ է հանդիսանում արտելը։ Յեթե ընդհանուր ժողովը վարչության կողմից չի հրավիրվի վերստուգիչ հանձնաժողովի կամ արտելի անդամների թվի վորոշված մասի պա-

հանջը ստանալուց յերկու շաբաթվա ընթացքում, ապա ընդհանուր ժողովը հրավիրվում է վերըստուգիչ հանձնաժողովի կողմից։ Իսկ յեթե վարչության կողմից ընդհանուր ժողովը չի հրավիրվում հակառակ միության պահանջի, այն դեպքում վերջինիս կողմից պահանջը ներկայացնելու որից յերկու շաբաթվա ընթացքում ընդհանուր ժողովը կարող է հրավիրվել միության կարգադրությամբ։

70. Արտելի անդամներին ժողովի հրավիրելու կարգը և ձևը կարող է սահմանվել ընդհանուր ժողովի կողմից, սակայն համենայն դեպս արտելի անդամներին ընդհանուր ժողովի որվա և տեղի մասին պետք է տեղեկացվի գոնե մի շաբաթ առաջ, ինչպես նաև այդ մասին պետք է վարչության գրասենյակում կախված լինի հայտարարություն, ցույց տալով ժողովում քննվելիք հարցերը։

71. Ընդհանուր ժողովը համարվում է կայացած, յեթե նրանում ներկա յեն վոչ պակաս, քան արտելի բոլոր անդամների կեսը։ Իսկ յեթե ժողովը հրավիրվում է լուծելու՝ ա) անդամների հեռացման, բ) արտելի հատուկ դրամագլուխներին արվելիք պարտադիր մուծումներ սահմանելու, գ) կանոնադրության փոփոխման և դ) արտելի գործունեության դադարեցման հար-

ցերը, ապա պահանջվում է վոչ պակաս, քան արտելի անդամների $^2/_3$-դ մասի ներկայությունը։

72. Եթե ընդհանուր ժողով նշանակված որը չի հավաքվի 71-րդ հոդվածում հիշված թվով արտելի անդամներ, ապա ժողովի որակարգում դրված հարցերի լուծման համար նշանակվում է վոչ շուտ, քան յերեք որ և վոչ ուշ, քան մեկ ամիս հետո, ներկա ժողովից հետո յերկրորդ ընդհանուր ժողովը, վորը համարվում է կայացած, անկախ ներկա յեղողների թվից։ Յերկրորդ ընդհանուր ժողովի քննությանը յենթակա յեն միայն առաջին չկայացած ժողովում դրված հարցերը։

73. Ընդհանուր ժողովը բացվում է վարչության նախագահի կամ նրա տեղակալի կողմից. ընդհանուր ժողովում նախագահում է այդ առթիվ ընդհանուր ժողովի կողմից ընտրված անձնավորությունը։

Ժողովի նախագահը հետևում է, վորպեսզի որակարգում դրված բոլոր հարցերը լուծվեն 71 և 72-րդ հոդվածներով սահմանված թվով արտելի անդամների մասնակցությամբ։ Ժողովի նախագահի կողմից, հարցերը վորոշելու համար անհրաժեշտ թվով անդամների բացակայությունը յերևան հանելու դեպքում ժողովը կարող է փակվել, սակայն մինչ այդ ժողովի կողմից ընդունված վորոշումները չեն կորցնում իրենց ուժը։

74. Ընդհանուր ժողովում վճռողական ձայնով իրավունք ունեն մասնակցելու այն անձինք, վորոնք ընդհանուր ժողովի զումարման որը հանդիսանում են արտելի անդամ։ Արտելի յուրաքանչյուր անդամը ոգտվում է մեկ ձայնի իրավունքով, ըստ վորում այդ իրավունքը չի կարող փոխանցվել վորևե մեկ ուրիշին։ Արտելի այն անդամները, վորոնց արտելից հեռացնելու հարցն է քննվում, ընդհանուր ժողովում չեն մասնակցում այդ հարցի քվեարկման։ Ընդհանուր ժողովում, արտելի վարչական մարմինների հրավերով կամ ընդհանուր ժողովի թույլտրվությամբ խորհրդակցական ձայնով կարող են մասնակցել և այլ անձինք, վորոնք արտելի անդամներ չեն։

75. Ընդհանուր ժողովի վորոշումներն ընդունվում են ժողովում ներկա յեղող արտելի անդամների ձայների հասարակ մեծամասնությամբ, իրաց առյալ 71-րդ հոդվածում նշված հարցերի։ Այդ հարցերի լուծման համար պահանջվում է վոչ պակաս, քան ժողովում ներկա յեղող անդամների $^2/_3$-րդ ձայների մեծամասնությունը։ Ձայների հավասար լինելու դեպքում

հարցը համարվում է չլուծված և փոխադրվում է հետևյալ ընդհանուր ժողովը։

76. Վարչության և վերստուգիչ հանձնաժողովի անդամները, որոնք հանդիսանում են արտելի անդամներ, մասնակցում են ընդհանուր ժողովներին մյուս անդամների հետ հավասար իրավունքներով, բացի հետևյալ հարցերը քննելիս՝

ա) նրանց հաշվետվությունը հաստատելիս.

բ) նրանց գործունեությանը գնահատականը տալիս.

գ) նրանց վարձատրության չափը որոշելիս.

դ) ժամկետից առաջ նրանց պաշտոնից հեռացնելու հարցը քննելու ժամանակ.

յե) նրանց դատական պատասխանատվության յենթարկելու հարցը լուծելու ժամանակ։

77. Ընդհանուր ժողովի որոշումները մրցվում են հատուկ գրքի մեջ և ստորագրվում են ժողովի նախագահի, քարտուղարի, ներկա գտնվող վարչության և վերստուգիչ հանձնաժողովի անդամների և արտելի վարեմ մեկ անդամի կողմից։

Ժողովի արձանագրությանը կցվում է ժողովին ներկա յեղող բոլոր անդամների ցուցակը, որը ստորագրված պիտի լինի ժողովի նախագահի և քարտուղարի կողմից։

78. Ընդհանուր ժողովի բոլոր որինական վորոշումները պարտադիր են արտելի բոլոր անդամների համար, ինչպես ժողովում ներկա յեղողների, այնպես էլ բացակայողների և առարկողների։ Համար ընդհանուր ժողովի վորոշումների դեմ արտելի առարկող անդամներն իրավունք ունեն հայտնել իրենց առանձին կարծիքը և պահանջել, վորպեսզի այդպիսին մտցվի արձանագրության մեջ, յեթե նրանք գտնում են, վոր վորոշումները հակասում են որենքներին կամ արտելի շահերին։

79. Ընդհանուր ժողովի՝ որենքին և սույն կանոնադրությանը հակասող վորոշումները պարտադիր չեն արտելի անդամների համար։ Վարչությունը պարտավոր է այդ վորոշումները կյանքում չկիրառել և վոչ ուշ, քան յերկու շաբաթ հետո հրավիրել նոր ընդհանուր ժողով, այդ հարցերը նորից լուծելու համար։

80. Յեթե արտելի անդամների թիվը լինի 300-ից բարձր, այդ դեպքում ընդհանուր ժողովը, կանոնադրության լրացման կարգով, կարող է հիմնել լիազորների ժողով և հանձնարարել նրան լուծելու ընդհանուր ժողովի իրավասության ներքո գտնվող բոլոր հարցերը կամ նրանց մի մասը։ Լիազորների ընտրության կարգը, նրանց թիվը և լիազորությունների սահմանները

և ժամկետները, այլև լիազորների ժողովի իրավասության յենթակա հարցերը վորոշվում են հատուկ կանոնադրությամբ։

Բ. ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

81. Վարչությունը հանդիսանում է արտելի գործադիր մարմինը։ Նա վարում է արտելի բոլոր գործերը սույն կանոնադրության ճիշտ հիման վրա և ներկայացնում է իրենից արտելը առանց վորևե փոխանորդագրի արտելի բոլոր գործերում, պարտավորություններում կողմնակի անձանց և արտելի անդամների, այլև հիմնարկությունների և կազմակերպությունների հետ հարաբերությունների մեջ մտնելիս։

82. Մասնավորապես վարչության վրա դրվում է՝

ա) անդամների ընդունելությունը, յեթե այդպիսին հանձնարարված կլինի նրան ընդհանուր ժողովի կողմից.

բ) սույն կանոնադրության և ընդհանուր ժողովի կողմից սահմանված կանոնների հիման վրա, արտելի ֆունկցիաների մեջ մտնող գործողությունների կատարելը.

գ) արտելի գործունեության ամեն մի ճյուղի համար կանոնները սահմանելը և այդպիսիներն ընդհանուր ժողովին ի հաստատություն ներկայացնելը.

դ) արտելի աշխատանքները արտելի անդամների միջև բաշխելը, անդամների կողմից աշխատանքների ճշգրիտ կատարման վրա հսկողություն ունենալը և արտելի անդամների վրա ընդհանուր ժողովի կողմից սահմանված տույժեր դնելը.

յե) արտելի աշխատանքների ներքին կարգապահության կանոնների, արտելի անդամների հետ հաշվեարկում կատարելու և նրանց աշխատանքի գնահատության կարգերը սահմանելը.

զ) վարկային և այլ տեսակի հիմնարկություններից, այլև մասնավոր անձանցից գումարներ և արժույթներ ստանալը, արտելին պատկանող և նրան հանձնված գումարների, արժույթների և գույքի պահպանելը և ծախսելը.

ե) փոխառությունների կնքելը.

ը) ամեն տեսակի պայմանագրեր և ակտեր կնքելն ու փոխանորդագրեր տալը.

թ) արտելին անհրաժեշտ հումության, նյութերի և կահույքի, այլև արտելի պատրաստվածքների կատարելը.

ժ) հանդես գալ դատարանում արտելի կողմից իբրև հայցվոր և պատասխանող.

ի) աշխատակիցների վարձելը, հրավիրելը և արձակելը.

լ) արտելի հաշիվների, դրքերի և գործա-

վարության վարելը և արտելի գործերով բոլոր անձանց և հիմնարկ-ձեռնարկների հետ գործնական հարաբերությունների մեջ մտնելը.

ժգ) արտելի գործունեության պլանի, ծախսերի և յեկամուտների նախահաշվի և տարեկան հաշվետվության կազմելը և այդպիսին իհաստատություն ընդհանուր ժողով մտցնելը.

ժդ) հանդես գալ դատարաններում, վարչական և այլ պետական հիմնարկություններում ու հասարակական կազմակերպություններում իբրև իր արտելի անդամների պաշտպան.

ժե) ինչպես սույն կանոնադրության եյությունից բղխող, այնպես ել ընդհանուր ժողովի կողմից հանձնարարված և սույն կանոնադրության մեջ առանձին նշված այլ պարտականությունների կատարելը։

83. Վարչության աշխատանքների ներքին կարգապահության կանոնները և արտելի գործերի վարելը, այլև և վարչության անդամների լիազորությունների սահմանները ու նրանց կողմից իրենց պարտականությունների կատարելու կարգը, վորոշվում է ընդհանուր ժողովի կողմից հաստատված հրահանգով, իսկ հրահանգի բացակայության դեպքում՝ այդպիսիքը սահմանում ինքը՝ վարչությունը։

84. Արտելի բոլոր գրագրությունը տարվում է վարչության կողմից, նախագահի կամ վարչության վորևե անդամի ստորագրությամբ։ Արտելի պարտավորագրերը, մուրհակները, չեկերը և այլ նման դրամական փաստաթղթերը, այլև փոխանորդագրերը պետք է լինեն ստորագրված վարչության նախագահի և վարչության վորևե մեկ անդամի կողմից կամ վարչության յերկու անդամի կողմից և կամ վարչությունից փոխանորդագիր ունեցող մեկ անձնավորության կողմից։

85. Վարչությունը պարտավոր է՝

ա) կազմել և տանել արտելի անդամների ցուցակը.

բ) պահել հատուկ հաշիվ անդամների կողմից մուծված փայերի և մուտքի վճարների, այլև անդամների կողմից հատուկ դրամագլուխների համար արված մուծումների.

գ) տանել հատուկ հաշվեառում արտելի պարտավորությունների նկատմամբ անդամների վրա դրված պատասխանատվության չափի։

86. Վարչությունը պարտավոր է գործառնական տարին լրանալուց վոչ ուշ, քան յերեք ամիս հետո գումարել ընդհանուր ժողով իր կողմից կազմված արտելի տարեկան հաշվետվությունը քննելու և հաստատելու համար։

87. Վարչության սխալ գործունեության և նրա թերացումների հետևանքով արտելին հասցրած վնասների համար իրենց ամբողջ գույքով միատեղ պատասխանատու չեն վարչության այն բոլոր անդամները, որոնք խախտել են իրենց պարտականությունները։

Այն գործերի համար, որոնք ընդհանուր ժողովի կողմից հանձնարարված են լեղել բացառապես վարչության որևե մեկ անդամին, վարչությունը պատասխանատվություն չի կրում, յեթե միայն նա հնարավորություն չի ունեցել կանխելու վնասները։

88. Վարչությունը լինում է վոչ պակաս 3 անդամից և ընտրվում է ընդհանուր ժողովի կողմից _____ ժամանակով։ Ժամանակավոր բացակայող և հեռացող վարչության անդամներին փոխարինելու համար միևնույն կարգով ընտրվում են յերկու թեկնածուներ։

89. Վարչության և վերստուգիչ հանձնաժողովի կազմի մեջ չեն կարող ընտրվել խորհուրդների ընտրության մասնակցելու ձայնի իրավունքից զրկված քաղաքացիները։ Բացի այդ վարչության և վերստուգիչ հանձնաժողովի կազմի մեջ միաժամանակ չեն կարող ընտրվել ամուսնական կապերով կապված անձինք և մոտիկ ազգականներ։

Վարչության և վերստուգիչ հանձնաժողովի կազմի մեջ կարող են ընտրվել և այլ անձինք, որոնք արտելի անդամ չեն։

90. Ընդհանուր ժողովը կարող է ինքը ընտրել վարչության նախագահին կամ հանձնարարել վարչության, որ վերջինս ինքը ընտրի իր կազմից այդպիսին։

Վարչության նախագահի բացակայության ժամանակ նրան փոխարինելու համար վարչությունն ինքը ընտրում է նախագահի տեղակալ։

91. Յեթե արտելի հաշվետվությունը հանձնարարվում է վարչության որևե անդամին, այն դեպքում հաշվետարի պարտականությունները վոչ մի դեպքում չեն կարող միացվել գանձապահի պարտականություններին։ Բացի այդ գանձապահն իրավունք չունի տանել նաև մեկ ուրիշ դրամարկղի գործերը։

92. Վարչության նիստերը համարվում են կայացած, յերբ նրանում ներկա յեն վոչ պակաս, քան վարչության անդամների կեսը։ Յեթե վարչությունը բաղկացած է 5 կամ ավելի պակաս անդամներից, ապա պահանջվում է վոչ պակաս, քան յերեք անդամի ներկայությունը։

Վարչության նիստերում ներկա յեղող անդամների թվի մեջ պետք է լինի վարչության նախագահը կամ նրա տեղակալը։

93. Վարչության նիստեր պետք է տեղի ունենան վոչ պակաս, քան ամիսը մեկ անգամ։ Վարչության նիստերի որվա, ժամանակի և ժամի մասին պետք է վարչության շինքում փակցվի հայտարարություն։

94. Վարչության անդամի հիվանդության կամ բացակայության դեպքում նրան փոխարինում է ընտրական ավելի ձայն ստացած թեկնածուն։

95. Վարչության նիստերում կարող են մասնակցել խորհրդակցական ձայնի իրավունքով վարչության թեկնածուները, վերստուգիչ հանձնաժողովի անդամները և վարչության կողմից հրավիրված անձնավորությունները։

96. Հարցերը վարչության նիստերում վորոշվում են ձայների հասարակ մեծամասնությամբ։

97. Ընդհանուր ժողովը կարող է նշանակել վարչության անդամներին վարձատրություն, վորպես մշտական աշխատավարձ։

98. Վարչության գործողությունների դեմ բողոքները տրվում են ընդհանուր ժողովին վերստուգիչ հանձնաժողովի միջոցով։

99. Վարչության անդամը կարող է հեռացվել իր պաշտոնից ընդհանուր ժողովի կողմից մինչև ժամկետի լրանալը։

100. Եթե արտելի անդամների թիվը 50-ից չի անցնում, ընդհանուր ժողովի վորոշմամբ կարող է վարչությունը փոխարինվել մեկ անձնավորությամբ—ավագով, վորն ընտրվում է ընդհանուր ժողովի կողմից արտելի այն անդամների թվից, վորոնց ընտրական իրավունքները չեն սահմանափակված։ Արտելի ավագի վրա դրվում է պարտականություն արտելի գործերի միանձնյա տանելը, ըստ վորում նրա վրա դրվում են վարչության բոլոր պարտականությունները և իրավունքները։ Ընդհանուր ժողովն ավագին ընտրելիս ընտրում է նաև թեկնածու։ Վորպես ավագ և թեկնածու չեն կարող ընտրվել այն անձինք, վորոնք կապված են ամուսնական կապով կամ մոտ ազգակցական հարաբերության մեջ են (հոդ. 89) վերստուգիչ հանձնաժողովի անդամների կամ վերստուգիչի հետ (հոդ. 106)։

9. ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

101. Վերստուգիչ հանձնաժողովն ընտրվում է ընդհանուր ժողովի կողմից----------ժամանակով, թվով վոչ պակաս, քան յերեք հոգի, վորոնք չեն մտնում վարչության կազմի մեջ և արտելի ծառայողներ չեն։ Վերստուգիչ հանձնաժողովի մեջ չեն կարող ընտրվել այն անձնավորությունները, վորոնք չու-

նեն խորհուրդների ընտրություններին մասնակցելու ձայնի իրավունք։

Սույն կանոնադրության 83, 87, 89, 90, 92, 94, 95, 96 և 97 հոդվածները կիրառվում են նաև վերստուգ. հանձաժողովի անդամների նկատմամբ։

102. Վորպես արտելի ներքին վերահսկողության մարմին, վերստուգիչ հանձնաժողովի վրա դրվում են հետևյալ պարտականությունները՝

ա) վարչության կողմից ընդհանուր ժողովին ներկայացվելիք հաշվետվությունների և նախահաշիվների ստուգումը և նրանց մասին յեզրակացություններ տալը.

բ) վոչ պակաս, քան տարին մեկ անգամ, բացի այդ, ըստ կարիքի, արտելի գույքի և ընդհանրապես նրա գործունեության ստուգում կատարելը։

Մասնավորապես վերստուգիչ հանձնաժողովի վրա դրվում է՝ կանխիկ դրամի, արժեքավոր թղթերի և այլ արժույթների ստուգումը և նրանց գրքերի և հաշիվների հետ համեմատելը, արտելին պատկանող և նրան հանձնված պատրաստվածքների և այլ գույքի ստուգումը.

Գրքերի և փաստաթղթերի ստուգումը և ամբողջ տարվա ընթացքում հանձնաժողովի վերստուգման գործունեության առթիվ ընդհանուր ժողովին իր յեզրակացությունը ներկայացնելը։ Հանձնաժողովը քննության է յենթարկում նաև վարչության անկանոն գործունեության վերաբերյալ բողոքները։

103. Վարչության սխալ գործողությունների, այլև դրամարկղի, հաշվետարության և արտելի աշխատանքների ստուգման ժամանակ յերևան հանված թերացումների և թերությունների մասին վերստուգիչ հանձնաժողովը հայտնում է վարչությանը։ Իսկ արտելի աշխատանքներում ավելի եական անկանոնությունների և զեղծարարությունների յերևան հանելու դեպքում վերստուգիչ հանձնաժողովը հրավիրում է ընդհանուր ժողով, համաձայն 69-րդ հոդվածի։

104. Վերստուգիչ հանձնաժողովը հավաքվում է նախագահի հրավերով ըստ կարիքի, բայց վոչ պակաս, քան ամիսը մեկ անգամ։ Առանձին ստուգողական գործողությունները վերստուգիչ հանձնաժողովը կարող է հանձնարարել իր առանձին անդամներին։ Իր բոլոր գործողությունների մասին վերստուգիչ հանձնաժողովը կատարում է գրանցումներ հատուկ գրքում։

Վերստուգիչ հանձնաժողովն իր բոլոր գործողությունների մասին հայտնում է վարչու-

թյանն իգիտություն վոչ ուշ, քան ընդհանուր ժողով գումարվելուց յերեք որ առաջ, վորպեսզի վարչությունն իր բացատրությունները ներկայացնի վերջինին։

Վերստուգիչ հանձնաժողովն իրավունք ունի պահանջել վարչությունից այն բոլոր անհրաժեշտ տեղեկությունները, վորոնք գտնվում են վարության տրամադրության տակ։

105. Վերստուգիչ հանձնաժողովի սխալ գործությունների դեմ հայտարարություններ տրվում են ընդհանուր ժողովին միայն հանձնաժողովի միջոցով, վորը պարտավոր է ներկայացնել այդպիսիները մոտակա ընդհանուր ժողովին իր յեզրակացությունների հետ միասին։

106. Յեթե արտելի անդամների թիվը 50-ից չի անցնում, ընդհանուր ժողովի կողմից վերստուգիչ հանձնաժողովը կարող է փոխարինվել մեկ անձնավորությամբ (վերստուգող) վորն ընտրվում է ընդհանուր ժողովի կողմից այն անձանց թվից, վորոնք իրավունք ունեն ընտրվել վերստուգիչ հանձնաժողովի կազմի մեջ (հոդ. 101)։ Վերստուգողի վրա դրվում է վերստուգիչ հանձնաժողովի բոլոր պարտականությունները և նա ոգտվում է 102—105 հոդվածներում հիշված նրա իրավունքներով։ Ընդհանուր ժողովի

կողմից կարող է ընտրվել նաև վերստուգողի թեկնածու-տեղակալ։

10. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

107. Արտելում անպայման տարվում են գրքեր, համաձայն առևտրական գրքերը տանելու մասին համապատասխան վորոշումների։

Այս գրքերում գրանցվում են՝

ա) արտելի բոլոր շրջանառությունների ընդհանուր մուտքը և յելքը և դրամարկղում յեղած գումարները։

բ) Արտելի առանձին շրջանառությունների մուտքը և յելքը։

Արտելի գանազան անձանց և հիմնարկությունների հետ ունեցած հաշիվները։

108. Արտելի հաշվետու տարին հաշվում է հոկտեմբերի 1 ից մինչև մինչև հետևյալ տարվա սեպտեմբերի 30-ը։ Արտելի առաջին հաշվետու տարին համարվում է արտելի գործունեության որից մինչև մոտակա սեպտեմբերի 30-ը

109. Արտելի հաշվեվությունը գրքերի և փաստաթղթերի հետ միասին մինչև ընդհանուր ժողովին ներկայացնելը ստուգվում են վերստուգիչ հանձնաժողովի կողմից, վորը տալիս է

դրանց մասին իր լեզրակացությունը և ներկայացնում է այն հերթական ընդհանուր ժողովին։

110. Տարեկան հաշվետվությունը պետք է պարունակի իր մեջ արտելի գործունեության մասին բոլոր անհրաժեշտ տվյալները և մասնավորապես՝ հաշվեկշիռը, մուտքը և ելքը և արտելի կատարած շրջանառությունների մեացորդները, ոգուտների և վնասների հաշիվը, նշելով զուտ ոգուտը կամ վնասը, ինչպես նաև հիշատակումներ արտելի անդամների թվի մեջ և արտելի պարտավորությունների համար արտելի անդամների վրա վերցրած պատասխանատվության ընդհանուր գումարի փոփոխության մասին։

111. Տարեկան հաշվետվությունը պետք է կազմված լինի և ստորագրված վարչության և վերստուգիչ հանձնաժողովի անդամների կողմից վոչ ուշ, քան ընդհանուր ժողովը կայանալուց յերկու շաբաթ առաջ, վորին պետք է ներկայացվի հաշվետվությունը։ Այս յերկու շաբաթվա ընթացքում հաշվետվությունը պետք է վորոշ ժամերում բաց լինի՝ արտելի անդամների կողմից ծանոթանալու համար։

112. Հաշվետվությունը վարչության կողմից նշանակված ժամկետում չկազմելու դեպքում (հոդ. 111), վերստուգիչ հանձնաժողովը պարտավոր է հաշվետվության կազմելն իր հաշվի

կողությամբ հանձնարարել այլ անձանց ի հաշիվ վարչության անդամների։

113. Ընդհանուր ժողովի կողմից հաստատված հաշվետվությունը պահվում է արտելի գործերում։

114. Հաշվետվության հաստատվելուց հետո արտելի տարեկան հաշվետվությունը և հաշվեկշիռը վարչության կողմից ներկայացվում է այն կոոպերատիվ միությանը, վորի անդամ է հանդիսանում արտելը։ Յեթե արտելը անդամ չէ կոոպերատիվ միության, այն դեպքում հաշվետվությունը և հաշվեկշիռը պետք է ներկայացվի ժողովրդական տնտեսության պետական մարմնին, վորտեղ տոմարագրված է արտելի կանոնադրությունը։

II. ԱՐՏԵԼԻ ԳՈՐԾՈՒՆԵՅՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ

Արտելը համարվում է չկազմակերպված, եթե նա չի անցել կանոնադրությամբ նախատեսված գործունեության իրագործմանը՝ կանոնադրությունը տոմարագրելու մասին հիմնադիրներին տեղեկացնելու որից 6 ամսվա ընթացքում։

116. Արտելը դադարում է՝

ա) ընդհանուր ժողովի վորոշմամբ.

բ) յեթե արտելի անդամների թիվը կլինի

5-ից պակաս և կրճատման որից երկու ամսվա ընթացքում չի լրացվի այն.

գ) կանոնադրության մեջ հիշված նպատակներից շեղվելու դեպքում, այլև արտելի գործունեության ուղղությունը պետության շահերին հակասող համարվելու դեպքում որենքում նշված գործադիր կոմիտեյի վորոշմամբ (1929 թ. նոյեմբերի 16 ի արհեստագործական կոոպերացիայի մասին կանոնադրության 141-րդ հոդված)։

դ) դատարանի կողմից արտելը սնանկ ճանաչելու դեպքում.

ե) այլ կոոպերատիվ կազմակերպություններին միանալու կամ արտելը յերկու կամ ավելի արտելների բաժանվելու դեպքում։

117. Լուծարքային հանձնաժողով հիմնելու և նրա գործունեության կարգը սահմանվում է 1929 թ. նոյեմբերի 16-ի արհեստագործական կոոպերացիայի մասին կանոնադրության 144—160 հոդվածներով։

118. Արտելի վրա վերցրած պարտավորություններով արտելին ներկայացրած պահանջները բավարարելուց և արտելի անդամների հատուկ դրամագլուխներին արված և վերադարձման յենթակա մուծումները վճարելուց հետո արտելի մնացած դրամագլուխները և գույքն անցնում է այն կոոպերատիվ միությանը, վորի անդամ է

հանդիսանում արտելը, իսկ յեթե արտելը միության անդամ չէ, այն դեպքում այդպիսին անմիջականորեն անցնում է արհեստագործական կոոպերացիայի ավելի բարձր կանգնած միությանն։

119. Այլ կոոպերատիվ կազմակերպություններին միանալու դեպքում արտելի դադարման կարգը սահմանվում է 1929 թ. նոյեմբերի 16-ի արհեստագործական կոոպերացիայի մասին կանոնադրության 128—139 հոդվածներով։

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ

ԸՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ—ԸՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԸՐՏԵԼԻ ՀԻՄՆԱԴԻՐՆԵՐԻՆ

Կանոնադրության մեկնաբանության կարգը

Այս կանոնադրությունը հաստատվում է որինակելի։

Արտելի հիմնադիրները կարող են մտցնել այս կանոնադրության բովանդակության մեջ փոփոխություններ և լրացումներ, վորպիսիքը նրանց կգտնեն անհրաժեշտ, միայն թե այդ փոփոխությունները և լրացումները չհակասեն արհեստագործական կոոպերացիայի մասին կանոնադրության կանոններին (արհեստագործական կոոպերացիայի մասին կանոնադրությանը, հաստատված Հայկենտգործկոմի կողմից 1929 թ, նոյեմբերի 16-ին և այլ որենքներ՝ ինչպիսին են՝ պահեստի դրամագլուխների, աշակերտության մասին և այլն)։

Որինակելի կանոնադրությունն ընդունելով հիմնադիրները, մինչև այն ստորագրել և տոմարագրող մարմիններին ներկայացնելը, պետք է լրացնեն կանոնադրության բովանդակության մեջ ազատ թողնված տեղերը, այսինքն՝

Վերնագրում՝ արտելի անվան (ֆիրման) հետ սովորաբար հիշատակվում է թե արտելը վորտեղ է գտնվում, որինակ «Յերևանի արհեստագործական արտադրական» այնուհետև «արտադրական» խոսքից հետո պետք է ցույց տալ, թե ինչ արտադրությամբ է զբաղվելու արտելը, որինակ՝ «կոշկակարական արտել» կամ «հյուսվածքագործական արտել»։ Հոկտեմբեր» կամ «Մասիս» և այլն։

1-ին հոդվածում «սահմաններում ապրող» խոսքերից առաջ պետք է ցույց տալ այն վայրի անունը, վորտեղ արտելը համախմբում է անդամներին, որինակ՝ «Յերևանի գավառի սահմաններում, կամ Լոռու գավառի սահմաններում»։

«Արտելի վարչությունը գտնվում է» բառերից հետո պետք է ցույց տալ տեղը (քաղաքը, գյուղը) վորտեղ գտնվելու յե արտելի վարչությունը, որինակ՝ «Յերևան քաղաքում» կամ «Ղամարլու գյուղում»։

2-րդ հոդվածում «արտադրության ասպարիզում» բառերից առաջ պետք է ցույց տալ արտադրության տեսակը, որինակ՝ «կոշկակարական, աղյուսագործական» կամ «այս կամ այն առարկաների վերամշակման համար» և այլն։

26-րդ հոդվածում պետք է ցույց տալ ինչ չափով կարող է հաշվել արտելի յուրաքանչյուր

անդամի պատասխանատվությունը, որինակ «հընդապատիկ չափով կամ յեռապատիկ չափով.....
.....փայի նկատմամբ»։

31, 65-րդ հոդվածում պետք է ցույց տալ հիմնական դրամագլխին արվելիք հատկացումների չափով. որինակ—30%։

32-րդ հոդվածում պետք է ցույց տալ մուտքի վճարի չափը, լրացնելով «ռուբլի» բառից առաջ ազատ թողնված տարածությունը։

33-րդ հոդվածում պետք է ցույց տալ պարտադիր փայի չափը։ Փայի չափը կարող է սահմանվել տարբեր, նկատի առնելով արտելի անդամների մասնագիտացումը։ Այսպես որինակ՝ մետաղագործական արհեստում տոկարի համար կարող է սահմանվել փայի մեկ տեսակ չափ, դարբնի համար՝ մեկ տեսակ և ձուլողի համար՝ այլ։ Կամ կոշկակարական արտելում՝ ձևողի համար մեկ տեսակ փայ, կոշկակարի համար՝ մեկ տեսակ և մաշկակարի համար յերրորդ տեսակ և այլն, ըստ վորում փայի չափը պետք է ցույց տալ ռուբլիներով։ Այն դեպքերում, յերբ միաժամանակ արտել կընդունվեն մեկ ընտանիքին պատկանող մի քանի անդամները, նրանց համար կարող են սահմանվել փայի զանազան չափեր, որինակ՝ ընտանիքի ղեկավարի համար մեկ տեսակ փայի չափ, իսկ նրա ընտանիքի անդամ-

ների (կանանց և անչափահասների) համար այլ ավելի ցածր փայ։

40-րդ հոդվածում պետք է ցույց տալ ընդհանուր ժողովի կողմից հուրաքանչյուր անդամի համար սահմանված պարտադիր մուծումների գերագույն չափը։ Այս չափը պետք է սահմանվի կամ ռուբլիներով, որինակ՝ «100 ռուբլի», կամ փայի կամ լրացուցիչ պատասխանատվության չափի նկատմամբ վորևէ անգամ, որինակ՝ «փայի յեռապատիկ չափով»։

66-րդ հոդվածում պետք է ցույց տալ այն մուծումների գերագույն չափը, վորը կըպահանջվի ընդհանուր ժողովի կողմից յուրաքանչյուր անդամից տարեկան հաշվետվության արտելի վնասը ծածկելու համար։ Այս չափը կարող է սահմանվել կամ ռուբլիներով կամ վորևէ անգամի չափով փայավճարի նկատմամբ կամ արտելի աշխատանքներում մասնակցելու համար արտելի անդամին տրվող վարձատրության չափի նկատմամբ։

88 և 101 հոդվածներում պետք է ցույց տալ այն ժամկետները, վոր ընտրված են վարչությունը կամ վերստուգիչ հանձնաժողովը։ Ըստ որենքի այս ժամկետը վարչության համար չի կարող անցնել 3 տարուց։

Յեթե կանոնադրության բովանդակության մեջ արտելի հիմնադիրները մտցնեն վորևէ փո-

փոխություն, ապա անհրաժեշտ է ջնջել փոփոխված տեղերը և նրանց վերևում գրել մտցրված փոփոխությունները։ Նման ուղղումները պետք է մտցրվեն կանոնադրության վերջում՝ հիմնադիրների ստորագրություններից առաջ։

Կանոնադրության տոմարագրումը

Արհեստագործական արտելի կանոնադրությունը յենթակա չե տոմարագրման։ Դրա համար կանոնադրությունը և այն հայտարարությունը, որին կից նա ներկայացվում է տոմարագրման համար, պետք է ստորագրված լինեն ոչ պակաս, քան 5 հիմնադիրների կողմից։ Հիմնադիրները կարող են լինել կոոպերացման շրջանում (հոդ. 1) բնակվող այն բոլոր քաղաքացիները, որոնք լրացրել են 18 տարին և զրկված չեն խորհուրդների ընտրություններում ընտրողական ձայնի իրավունքից։

Հիմնադիրներ չեն կարող լինել ամուսնական կապերով կապված և մոտիկ ազգակցության մեջ գտնվող անձնավորությունները, այն է՝ յերեխաներ և ծնողներ, քույրեր և յեղբայրներ, պապեր և թոռներ։

Հայտարարության վրա հիմնադիրների ստորագրությունները պետք է վավերացված լինեն

նոտարի կողմից (այդպիսիի բացակայության դեպքում՝ ժողովրդական դատավորի կողմից) կամ շրջանային, գավառային գործադիր կոմիտեյի կամ գյուղխորհրդի կողմից։

Կանոնադրությունների մեջ հիմնադիրների ստորագրությունների վավերացումը չի պահանջվում։

Հայտարարության մեջ կարող է ցույց տրվել այն անձնավորությունը, որին հիմնադիրները լիազորում են տանել տոմարագրման գործը, որը կարող է նաև չպատկանել հիմնադիրների թվին։ Անկախ սրանից տոմարագրման մասին հայտարարության մեջ կարող է ցույց տրվել այն անձնավորությունը, որը լիազորում է ստանալ տոմարագրման վերաբերյալ գործերը և այս անձնավորության հասցեն։

Հայտարարության հետ պետք է ներկայացվեն՝

1) 4 բոլորովին միատեսակ կանոնադրությունները, ստորագրված հիմնադիրների կողմից։

2) համապատասխան մարմինների կողմից տրված տեղեկանքն այն մասին, որ հիմնադիրներն ունեցող են խորհուրդների ընտրություններին ընտրական ձայնի իրավունքով։

Հայտարարությունը և կանոնադրություն-

ները պետք է ստորագրված լինեն լրիվ—նրանց անունը, հայրանունը և ազգանունը։

Հայտարարությունների և կանոնադրությունների համար չի վճարվում դրոշմանիշը և ընդհանրապես տոմարագրման համար վոչ մի ծախս չի պահանջվում։

Արտելների տոմարագրման կարգը ՀՍԽՀ-ում սահմանվում է արհեստագործական կոոպերացիայի մասին կանոնադրության ..... հոդվածներով։

Համաձայն այս կանոնադրության գյուղական արտելները տոմարագրվում են տեղական շրջանային գործադիր կոմիտեների կողմից, իսկ քաղաքային կամ գավառային կենտրոնների արտելները տոմարագրվում են ՀՍԽՀ Ժողովրդական Տնտեսության Գերագույն Խորհրդի կողմից։

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆՄՈՒՇԸ

..... -լին

(ցույց տալ այն պետական մարմինը, վորի վրա որենքով դրված է տվյալ արտելի կանոնադրության տոմարագրումը)

..... Արտելի հիմնադիրներից

ցույց տալ արտելի անունը (տես. կանոնադրության վերնագիրը)

1
2
3
4
5 } Ցույց տալ յուրաքանչյուր հիմնադիրի անունը, հայրանունը, ազգանունը և բնակավայրը.

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հարակից ուղարկելով ..... արտելի կանոնադրության 4 բոլորովին միանման որինակները, խնդրում ենք տոմարագրել։

Միաժամանակ միևնույն արտադրությամբ զբաղվող արտելի անդամ լինելու արգելանքի մասին մեզ հայտնի է և մենք հայտարարում ենք, վոր մեզանից վոչ մեկը նույնանման արտադրությամբ զբաղվող վորևե այլ արտելի անդամ չի հանդիսանում։

Սույն հայտարարությունը տալու և արդեն տոմարագրված կանոնադրությունը ստանալու, ինչպե

նաև արտելի կանոնադրության մեջ ուղղումներ (յեթե այդ ուղղումները վերացնում են գոյություն ունեցող որենքներին հակասող կետերը կամ կրում են խմբագրական բնույթ) մտցնելու համար լիազորում ենք

(ցույց տալ անունը, հայրանունը և ազգանունը)

վորը բնակվում է _____

(ցույց տալ լիազորի բնակավայրը և հասցեն)

Հիմնադիրներ՝ (նրանց ստորագրությունները)

(անունները հայրանունները և ազգանունները)

19____թ. _____ ամսի «___»-ին հիմնադիրներ՝

1)_____ 2)_____ 3) _____

4 _____ 5) _____

սեփական ստորագրությունները _____

_____ վավերացնում է։

Վերոհիշյալ հիմնադիրները զրկված չեն Խորհուրդներում ընտրական իրավունքներից։

Նախագահ՝

Քարտուղար՝

ՀՍՍՌ-Արմ ՍՍՀ
Ս. Մ. Ա. Մասնայանի անվան

ՀՀ Ազգային գրադարան
NL0193301

Գրառ. № 2955(բ). Տիրաժ - 2000. Պատ. № 1403

Պետքրատի յերկրորդ տպարան Յերևանում.